



«ԱՍՊԵՆԴԻԱՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՕՊԵՐԱՅԻ ԵՎ ԲԱԼԵՏԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻՆ

Հ Ր Ա Մ Ա Ն

N 512-Լ

«20» ապրիլի 2026 թ.
ք. Երևան

«Ա. ՍՊԵՆԴԻԱՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՕՊԵՐԱՅԻ ԵՎ ԲԱԼԵՏԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ
ԹԱՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻՆ
ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄՆԵՐԻ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի և ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2020 թվականի մայիսի 22-ի N 652-Ա հրամանով հաստատված «Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության, այսուհետ՝ Թատրոն, կանոնադրության 26-րդ կետի համաձայն, ինչպես նաև հիմք ընդունելով Թատրոնի տնօրենի 2023 թվականի հոկտեմբերի 20-ի թիվ 1408-Լ հրամանով հաստատված «Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության ներքին կարգապահական կանոնները» պահանջները՝

հրամայում եմ.

ARMENIAN
NATIONAL OPERA
AND BALLET THEATRE

1. Սահմանել, որ ամսական պարգևատրում վճարվում է Թատրոնի այն աշխատողներին, ովքեր՝
ա) տվյալ ամսվան նախորդող ամսվա ընթացքում պատշաճ կատարել են իրենց աշխատանքային պարտականությունները և թույլ չեն տվել աշխատանքային կարգապահության որևէ խախտում կամ
բ) իրականացրել են Թատրոնի հանրահռչակմանն, այդ թվում Թատրոնի ներկայացումների ազդարարմանն ուղղված աշխատանքներ մամուլում, զանգավածային լրատվության այլ միջոցներում, սոցիալական ցանցերում կամ մասնակցել են Թատրոնի կողմից կազմակերպված համապատասխան միջոցառումներին կամ

գ) կենսաթոշակի անցնելու կապակցությամբ ազատվում են աշխատանքից կամ

դ) 30, 35, 40, 45, 50 տարի անընդմեջ բարեխիղճ աշխատել են Թատրոնում կամ

ե) փրկել են Թատրոնի գույքը ոչնչացումից, հափաշտակումից կամ կանխարգել են Թատրոնը հրդեհից կամ տեխնոլոգիական այլ աղետից:

Թատրոնի տնօրենն իրավունք ունի սույն կետում չնշված այլ հիմքերով պարգևատրել աշխատողին:

2. Սահմանել, որ ամսական պարգևատրում չի վճարվում այն աշխատողներին, ովքեր նախորդ ամսվա ընթացքում խախտել են աշխատանքային կարգապահության կանոնները, մասնավորապես՝ անհարգելի բացակայել են կամ ուշացել են աշխատանքից, պարապմունքներից, փորձերից կամ ներկայացումներից կամ ներկայացումների կամ փորձերի կամ պարապմունքների կամ դասերի ժամանակ չեն անջատել իրենց բջջային հեռախոսը (հեռախոսները) կամ այլ ռադիոէլեկտրոնային սարքերը կամ ներկայացումների կամ փորձերի կամ պարապմունքների ժամանակ օգտվել են բջջային հեռախոսից կամ այլ ռադիոէլեկտրոնային սարքից (խոսել են կամ ուղարկել են կամ ընդունել են հաղորդագրություններ կամ օգտվել են էլեկտրոնայի կայքերի կամ սոցիալական ցանցերի կամ էլեկտրոնային այլ ծառայություններից) կամ Թատրոնի տարածքում օգտագործել են ծխախոտային

արտադրատեսակներ, ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչներ կամ կատարել են այլ խախտումներ:

3. Սահմանել, որ երեք ամիս պարզևատրում չի վճարվում այն անձանց, ովքեր ունեն կարգապահական տույժ, եթե այդ տույժը չի վերացվել կամ հանվել:

4. Սահմանել, որ տվյալ ամսվա ընթացքում աշխատանքից հարգելի բացակայած անձանց վճարվում է պարզևատրում տվյալ ամսվա աշխատած օրերին համամասնորեն:

5. Սահմանել, որ յուրաքնչյուր աշխատողի միանգամյա պարզևատրման չափը որոշում է Թատրոնի տնօրենը կամ նրան փոխարինող անձը՝ հաշվի առնելով տվյալ աշխատողի աշխատանքի առանձնահատկությունները, աշխատանքի որակը, ներկայացումներին մասնակցության քանակը, Թատրոնի հանրահռչակմանն ուղղված աշխատանքները, նրա աշխատանքի արդյունքում Թատրոնի հասույթների ավելացման ծավալը և այլ էական հանգամանքներ:

6. Պարզևատրումը վճարվում է Թատրոնի տնօրենի կամ նրան փոխարինող անձի հրամանով՝ սեփական նախաձեռնությամբ կամ տնօրենի տեղակալների կամ համապատասխան ստորաբաժանումների ղեկավարների միջնորդությամբ:

7. Տվյալ ամսվա համար պարզևատրում վճարելու մասին միջնորդությունները պետք է ներկայացվեն մինչև հաջորդ ամսվա 10-ը: Միջնորդության, ինչպես նաև պարզևատրում վճարելու հրամանում պետք է նշվի պարզևատրման ենթակա անձի անունը, ազգանունը, պաշտոնը, պարզևատրման հիմքերը:

8. Հանձնարարել Թատրոնի անձնակազմի կառավարման բաժնի պետին՝ սույն հրամանի մասին օրենսդրությամբ սահմանված կարգով տեղեկացնել Թատրոնի բոլոր աշխատողներին:

9. Հանձնարարել Թատրոնի առցանց տոմսերի վաճառքի օպերատորին՝ սույն հրամանը մեկօրյա ժամկետում հրապարակել Թատրոնի պաշտոնական ինտերնետային կայքէջում և փակցնել Թատրոնի ծառայողական մուտքի մոտ տեղադրված հայտարարությունների տախտակին:

10. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում Թատրոնի պաշտոնական ինտերնետային կայքէջում հրապարակման հաջորդ օրվանից և տարածվում է 2026 թվականի ապրիլի 1-ից հետո վճարվող պարզևատրումների վրա:

Թատրոնի տնօրեն՝



Կ. Դուրգարյան

ք. Երևան

«20» ապրիլի 2026 թ.

ARMENIAN
NATIONAL OPERA
AND BALLET THEATRE